

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/5

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի 21.11.2014 թ-ի և 09.12.2014 թ-ի գանգատները ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտի դեմ:

Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի գանգատներում բերված փաստարկները.

2014 թ-ի հոկտեմբերի 22-ին ժամը 19:37-ի սահմաններում ք.Երևան, Սաֆարյան 77 հասցեում գտնվող դեղատուն մուտք են գործել երեք անձ (հետագայում պարզվել է, որ դրանք ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության աշխատակիցներն են) և ներկայացնելով ծառայողական վկայականները ու ցույց տալով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ-ի սեպտեմբերի 26-ի թիվ 5100487 հանձնարարագիրը, ասել են, որ իրենց մուտք գործելուց առաջ ինչ-որ անձի կողմից կատարվել է հսկիչ գնում՝ 700 դրամ արժեքով վիրակապ, որի համար ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Հաշվի առնելով այն, որ դեղատանը երբևէ բացի 50 դրամ արժողությամբ վիրակապից այլ արժողությամբ վիրակապ չի վաճառվել, Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը զարմացել է և պահանջել, որ նրանք ցույց տան այն անձին, որը կատարել է ենթադրյալ հսկիչ գնումը: Սակայն, նրանք ոչ միայն չեն մատնանշել նման ենթադրյալ գնում կատարած անձին, այլ սկսել են ՀԴՄ-ով իրականացնել որոշ գործողություններ և պահանջել ետ վերցնել գնված ապրանքը: Նման հակաօրինական գործողությունների արդյունքում Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը հրաժարվել է ստորագրել ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ-ի սեպտեմբերի 26-ի թիվ 5100487 հանձնարարագրի օրինակը և այդ պատճառով այն չի տրամադրվել, իսկ ապրանքը դեղատնից գնված չլինելու պայմաններում, այն ետ չի վերցվել:

2014 թ-ի հոկտեմբերի 24-ին փոստի միջոցով ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ-ի սեպտեմբերի 26-ի թիվ 5100487 հանձնարարագիրը:

2014 թ-ի հոկտեմբերի 28-ին հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց կողմից ներկայացվել են 2014 թ-ի հոկտեմբերի 27-ին կազմված թիվ 5100487 ստուգման ակտի նախագիծը: Նախագծի բովանդակությունից պարզվել է, որ ենթադրյալ հսկիչ գնումն իրականացվել է հարկային տեսուչ Սմբատ Խաչիկյանի կողմից, որին Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը տեսել է առաջին անգամ: Ընդ որում, Սմբատ Խաչիկյանը 2014 թ-ի հոկտեմբերի 22-ին՝ ստուգման օրը, երեք անձանց թվում չի եղել:

Ստուգման ակտի Նախագծում նշված է, որ. «Գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսավարողին (արձանագրությունը կցվում է), և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը:»:

Նախ հարկ է նշել, որ որևէ արձանագրություն չի կազմվել, իսկ ապրանքը և հսկիչ գնման գումարը ետ չի ստացվել վերը նշված հայտնի պատճառով, հետևաբար, չէր կարող նաև գոյություն ունենալ ապրանքը և հսկիչ գնման գումարը ետ ստանալու վերաբերյալ որևէ արձանագրություն: Մինչդեռ նախագծում գրված է, որ արձանագրությունը կցվում է:

Նախագծի վերաբերյալ Նոր Նորքի հարկային տեսչություն առարկություններ ներկայացնելուց հետո, ստուգում իրականացնողներն բացահայտել են իրենց կողմից

կազմված նախագծի բովանդակության սուտ լինելը և արդեն 2014 թ-ի նոյեմբերի 5-ին կազմված թիվ 5100437 ակտում փորձել են կարգավորել «բացթողումը» և գրել, որ Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը հրաժարվել է «գնված ապրանքը» ետ ստանալուց և ետ ընդունման արձանագրությունը ստորագրելուց:

Ելնելով վերոշարադրյալից 2014 թ-ի նոյեմբերի 5-ին կազմված թիվ 5100487 ակտը ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ հիմնավորմամբ:

1. Ստուգման ակտը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ակտն ընդունվել է խախտման դեպքի՝ հսկիչ գնում կատարելու փաստի և խախտման փաստի բացակայությամբ:

2. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով»: Մինչդեռ ստուգումն իրականացվել է 2014 թ-ի հոկտեմբերի 22-ին, իսկ ստուգման ակտի նախագիծը թվագրված է 2014 թ-ի հոկտեմբերի 27-ին (ենթադրյալ խախտմանը հաջորդող 4-րդ աշխատանքային օր), իսկ նախագիծը ենթադրյալ խախտման հաջորդող 5-րդ աշխատանքային օրում:

3. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ով հաստատված՝ Հարկային մամնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգի 1.6 կետով սահմանված է. «Հսկիչ գնման արդյունքում կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից»: Մինչդեռ ենթադրյալ խախտման վերաբերյալ որևէ արձանագրություն չի կազմվել: Հետևաբար, ստուգում իրականացնողների կողմից խախտվել է նաև խախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու օրենքի պահանջը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն անվավեր է առաջին չհանդիսացող այն ոչ իրավաչափ ակտը, որն ընդունվել է. «օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով»:

Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը գտնում է, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության 2014 թ-ի նոյեմբերի 5-ին թիվ 5100487 ակտը կազմվել է օրենքի խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներով Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը խնդրում է նշված ակտն անվավեր ճանաչել, իսկ ստուգում իրականացնողներին պատասխանատվության ենթարկել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ սույն գործը քննության է առնվել Հանձնաժողովի 26.12.2014 թ-ի նիստում: Արդյունքում ընդունվել է թիվ 35/4 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի 21.11.2014 թ-ի և 09.12.2014 թ-ի գանգատների հիման վրա

հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են ստացվել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտում արձանագրված խախտման փաստի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում քննվող գործը՝ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտով արձանագրված խախտումը Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի կողմից կատարված լինելու հանգամանքը չհիմնավորվելու հիմքով ավարտվել է, Հանձնաժողովը վերսկսում է Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի գանգատների հիման վրա կասեցված վարույթը՝ ըստ էության որոշում կայացնելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարի 26.09.2014 թ-ի թիվ 5100487 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Սմբատ Խաչիկյանի կողմից 22.10.2014 թ-ին ժամը 19:37-ին ք.Երևան, Սաֆարյան 77 հասցեում գտնվող դեղատնից կատարվել է հսկիչ գնում 700 դրամի չափով՝ 1 տուփ վիրակապ 700 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Տաթևիկ Հարությունյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 19:50-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 75.540 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 700 դրամը, ժամը 19:54-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն: Գնված ապրանքը ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ է վերադարձվել տնտեսավարողին, սակայն Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը հրաժարվել է այն ետ ստանալ: Արդյունքում ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ կետի պահանջները խախտելու համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանը պնդում է, որ Ակտով արձանագրվածը, այն է՝ իր մոտից 1 տուփ վիրակապ (700 դրամ արժեքով) գնվելու, ինչպես նաև նշված գնման դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվելու հանգամանքը, չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ըստ Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի, ք.Երևան, Սաֆարյան 77 հասցեում գտնվող դեղատնում, որտեղ իբրև իրականացվել է Ակտում նշված հսկիչ գնումը, նման տեսակի վիրակապ երբևէ չի վաճառվել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և

վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում չի հիմնավորվել Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի կողմից ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտում նկարագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ Ակտը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, իրականացված ստուգմամբ չի հիմնավորվել Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի կողմից Ակտում նշված ապրանքի իրացման, հետևապես նաև ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի պահանջները խախտվելու հանգամանքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ակտի դեմ Ա/Ձ Տաթևիկ Հարությունյանի բերված գանգատները ենթակա են բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 05.11.2014 թ-ի թիվ 5100487 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

